Comprehensive Community Health Centers

## ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ձեր սպասարկող բուժաշխատողը ցանկանում է վստահ լինել, որ Դուք և մյուս հիվանդները ստանում եք օգնություն, երբ ունեք դրա կարիքը: Մեր բոլոր հիվանդների համար բժշկական ծառայությունների առավելագույն հասանելիությունն ապահովելու նպատակով խնդրում ենք ծանոթանալ սույն կանոնակարգին.

Գրանցված ժամադրություններ. Մենք հնարավոր ամեն ինչ կանենք՝ Ձեզ հեռախոսով տեղյակ պահելու Ձեր առաջիկա ժամադրության մասին, սակայն, ի վերջո, Դուք եք այն անձը, ով պատասխանատու է հիշելու իր ժամադրության օրը և ժամը: Մենք առաջարկում ենք, որ Դուք կլինիկայում լինեք Ձեր ժամադրությունից 15 րոպե առաջ. գուցե հարկ լինի զբաղվել անհրաժեշտ որևէ թղթաբանությամբ: Նոր հիվանդը կլինիկա պետք է այցելի 30 րոպե շուտ:

Հաստատված ժամադրություններ. Ձեր ժամադրությունից մեկ օր առաջ մենք Ձեզ կզանգահարենք այն համարներով, որ Դուք տրամադրել եք մեզ՝ հաստատելու համար, որ Դուք դեռևս մտադիր եք պահպանել Ձեր ժամադրությունը: Եթե ձայնային փոստով կապվենք Ձեզ հետ, նամակ կթողնենք՝ հիշեցնելով Ձեր ժամադրության օրը և ժամը: Մենք կխնդրենք, որ Դուք մեզ ետ զանգեք, եթե չեք կարող ներկայանալ ժամադրությանը:

Ժամադրությունների չեղարկումը. Եթե չեք կարող ներկայանալ գրանցված ժամադրությանը, 24 ժամ առաջ մեզ պետք է զանգահարեք և տեղյակ պահեք, որպեսզի կարողանանք Ձեր ժամադրությունն առաջարկել մեկ այլ հիվանդի:

Ուշացումներ ժամադրություններից. Եթե գրանցված ժամադրությանը ուշ եք ներկայացել, մենք կանենք առավելագույնը Ձեզ աջակցելու համար, սակայն Ձեր ժամադրությունը կարող է տեղափոխվել:

Բաց թողնված ժամադրություններ. Բժշկական ծառայությունների սղության պատճառով խնդրում ենք անել առավելագույնը՝ ներկայանալու համար Ձեր ժամադրությանը կամ կլինիկային տեղյակ պահել, եթե կարիք ունեք ժամադրությունը տեղափոխել կամ չեղյալ համարել:

**CCHC-Իգլ Ռոք**
1704 Colorado Blvd.
Լոս Անջելես, Կալիֆոռնիա 90041
Հեռախոս՝ (323) 256-4116

**CCHC-Գլենդել**
801 S. Chevy Chase Dr, Suite 250
Գլենդել, Կալիֆոռնիա 91205
Հեռախոս՝ (818) 265-2264

**CCHC-Հայլենդ Փարք**
5059 York Blvd.
Լոս Անջելես, Կալիֆոռնիա 90042
Հեռախոս՝ (323) 344-4144

**CCHC-Հյուսիսային Հոլիվուդ**
12157 Victory Blvd
Հյուսիսային Հոլիվուդ, Կալիֆոռնիա 91606
Հեռախոս՝ (818)-755-8000

**CCHC-Սանլենդ**
8316 Foothill Blvd.
Սանլենդ, Կալիֆոռնիա 91040
Հեռախոս՝ (818) 273-8800